ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-24/9 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«19» «հոկտեմբերի» 2023թ., ժամը՝ 10:00**

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի սփյուռքի ներուժի քարտեզագրման և ներգրավման վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող՝ Կարինե Ազիզյան

Հանձնաժողովի անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի սփյուռքի ներուժի քարտեզագրման և ներգրավման վարչության ներուժի ներգրավման բաժնի ավագ մասնագետ՝ Արփինե Շահինյան

Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի սփյուռքի ներուժի քարտեզագրման և ներգրավման վարչության ներուժի քարտեզագրման և հաշվառման բաժնի մասնագետ՝ Թագուհի Սահակյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. «ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-24/9» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ

1.1 «ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-24/9» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2023թ. հոկտեմբերի 17-ը ժամը 10:00-ն: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2023թ. հոկտեմբերի 18-ին ժամը 10:00-10:30-ն՝ **eauction.armeps.am** համակարգի միջոցով:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Հեռախոս	ՀՎՀՀ
1	«ԱՐ ԵՎ ԱՐՏ» ՍՊԸ	+37499775506	01280472
2	«Մեդիա սիսթեմս» ՍՊԸ	+37460689090	00121294

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. Տեղեկատվություն հարցումների և պատասխանների վերաբերյալ

2.1 Հարցումներ չեն կատարվել և պարզաբանումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.**

3.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3.2 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

- «Ար և Արտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես. դիմում-հայտարարության մեջ նշված է, որ մասնակցել է 1, 2, 3 չափաբաժիններին, սակայն 3-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկ չի ներկայացվել, ինչպես նաև չորրորդ պարբերության 1)-ին ենթակետում բացակայում է «իրեն փոխկապակցված անձինք» արտահայտությունը:
- «Մեդիա Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

4. **«ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/9» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին**

<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց</u>

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել «Ար և Արտ» ՍՊԸ-ին, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկի նշված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2023 թվականի հոկտեմբերի 23-ին, ժամը 10:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 1, 226 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝	Կարինե Ազիզյան	
Անդամներ՝	Արփինե Շահինյան	
	Թագուհի Սահակյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	